նրանց հագուստի եւ պաճուճանքի համար: Այս բոլորի փոխարէն նա չէ ստանում, որպէս ասում են «նաղդ փող» — նրան տալիս են թղթեր միայն: Ահա նոյն թղթերն է, որ նա կրկին ետ է դարձնում գանձարանին իր երաշխաւորութեան պարտաւորութիւնը կատարելու ժամանակ:

— Հիմա դուք տեսա՞ք, — շարունակեց նա, — որ ամիրայ սեղանաւորը, բարձրագոյն դռան տնտեսը, զօրքի եւ հարկերի կապալառուն նոյնպիսի աւազակներ են, որպէս քուրդ իշխանի «շահբանդան» — որպէս քեռի Պետրոսը: Բայց նոյն «ամիրաներն» են մեր «ազգապետները», նրանք են դարձնում մեր ազգի կառավարութեան սանձը դէպի ամէն կողմ, որ կողմը որ իրենց հաճելի է...: Այժմ ի՞նչ յոյս կարող ենք ունենալ նրանցից, — մեր արիւնը ծծողներից, մեր աշխատութեան վաստակը մեր ձեռքից խլողներից...: Նրանց համար միշտ ձեռնտու է մի անկարգ եւ բռնակալ կառավարութիւն, որի պղտորութեան մէջ կարողանում են որսալ իրանց շահերը: Հայի արտասուքը եւ թափած արիւնը նրանց չէ ազդում. նրանք իրանց քսակը հարստացնելու համար են միայն մտածում...

— Եւ այսպէս, մեր ժողովրդի դրամատէրերը, այսինքն՝ այն անձինքը, որոնց ձեռքում կայ նիւթական կարողութիւն, փոխանակ օգնելու, որ մշակը եւ գիւղացին հաց եւ հանգստութիւն ունենան. աւելի իրանք են մաշում նրանց կենսական զօրութիւնը, աւելի իրանք են ամրացնում նրանց ստրկութեան շղթաները: Թէեւ նրանց գործողութիւնները կատարւում են անուղղակի կերպով, բայց միեւնոյն է՝ լինել աւազակ, կամ աւազակի ձեռքում գործիք: Բայց ազգը, միամիտ եւ տգէտ ազգը պարծենում է իր «ամիրաների» փառքով, խոնարհւում է նրանց առջեւ, եւ խորին յարգութեամբ մատուցանում է իր խոնարհ երկրպագութիւնը...

— Բայց ինչպէ՞ս է լինում, որ այսպիսի վատ մարդիկ մեծամեծ պաշտօնների են հասնում, — հարցրի ես:

— «Հայը հաւատարիմ է, ասում է թուրքը, նա լաւ ծառայել գիտէ»... Այո՛, հաւատարիմ է նա եւ նրա հաւատարմութիւնը հնար է տալիս վայելել կառավարութեան վստահութիւնը: Բայց հաւատարմութիւն բառը բռնակալի լեզուում ունի բոլորովին այլ նշանակութիւն, — նոյնիսկ նշանակութիւնը, որպէս աւազակապետը իր ձեռքի տակ եղող սրիկաներին իր հաւատարիմ պաշտօնեաներ է կոչում:

— Հայ դրամատէրերի այս տեսակ «հաւատարմութիւնը» մի կողմից առիթ տուեց նրանց իրանց գործունէութիւնը նուիրել կառավարութեան պիտոյքներին, միւս կողմից, զրկեց նրանց մի աւելի հաստատուն եւ ընդարձակ ասպարէզից, այն է՝ արդար եւ խղճմտանքով վաճառականութիւնը: — Այս